ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՑՈՒՄ

1889 թ. Պարիզի ցուցահանդէսում միջազգային կոնգրեսների թւում կայացաւ նաև «Ժողովրդային կրթութեան գործի մասնաւոր նախաձեռնողների կոնգրէսը» (Congrès des représentants de l'initiative privée pour l'instruction populaire)։ Այդ ժողովի գաղափարը և կազմակերպութիւնը պատկանում են Ֆրանսիացոց «Ժողովրդային կրթութեան դաշնակցութեանը», որի գործունէութիւնը ամենափայլուն կերպով ապացուցանում է, թէ ինչ կարող է անել այդ ասպարէզում մասնաւոր նախաձեռնութիւնը։ Ֆրանսիական դաշնակցութեան հիմնադիր Ժան Մասէն սկսեց այդ գործը, երբ ինքը մի հասարակ ուսուցիչ էր Էլզասի փոքրիկ գիւղաքաղաքում՝ Բէրլենհեյմում։ Այդ մարդը, որ այժմ սենատի անդամ է և ահագին ժողովրդականութիւն է վայելում ամբողջ Ֆրանսիայում, բանւորի որդի է։ Երիտասարդ ժամանակ նա դրաււում էր սոցիալական գաղափարներով, մասնակցում էր 1849 թւի յուլիսի ապստամբութեանը, մինչև անգամ ստիպւած էր փախչել Պարիզից և բնակւել առժամանակ Նորմանդիայում կեղծ անունով։ Բայց երբ նա վերադարձաւ Պարիզ, իրերի դրութիւնը այնքան փոխւել էր, որ այլ ևս անօգուտ էր մտածել որ և է քաղաքական գործունէութեան մասին։ Նա տեղ բռնեց „La République" օրագրի խմբագրատան մէջ, որի յանձնարարութեամբ գնաց գաւառներում թղթակիցներ որոնելու։ Այդ ճանապարհորդութիւնը, Մասէի իրան ասելով, մեծ ազդեցութիւն ունեցաւ նորա յետագայ գործունէութեան վերայ։ Նա ճանապարհորդում էր մեծ մասամբ ոտով, քաղաքից քաղաք, շատ գիւղերում կանգ էր առնում։ Այսպէս տեղն ու տեղը շփւելով հասարակ ժողովրդի

կեանքի հետ, Մասէն միջոց ունեցաւ ճանաչելու նորա շահերն ու ձգտումները և համոզեց այդ շրջանում տիրող տգիտութեան մասին։ Նա պարզ հասկացաւ, որ ժողովրդի տգիտութիւնը և այն, որ նա չի կարողանում բարեկամին թշնամուց ջոկել, գլխաւոր խոչընդոտներից մէկն էր Ֆրանսիացոց պետութեան կանոնաւոր զարգացման համար։ Այդ միջոցին նորա գլխում առաջին անգամ միտք ծագեց ժողովրդի կրթութեան գործին նուիրուելու։ Բայց շատ տարի անցաւ՝ մինչև որ նա իրագործեց այդ միտքը։ Ճանապարհորդութիւնից վերադառնալուց քիչ յետոյ նա ամուսնացաւ և թողեց աւաջուայ թափառական կեանքը։ Նա ուսուցչութեան պաշտօն յանձնառաւ Էլզասի մի փոքրիկ գիւղի օրիորդաց դպրոցում և դադարեց քաղաքականութիւնով պարապել, համոզուելով որ այդ պարապմունքները ներկայ միջոցին բոլորովին անօգուտ են։ Տասը տարի շարունակ նա ապրում էր հեռու հասարակական կեանքից, բոլորովին անձնատուր եղած իւր ուսուցչական գործին և, բացի դորանից, շարադրում էր մանկական ընթերցանութեան գրքեր։ Այդ շարագրութիւններից ամենամեծ յաջողութիւնն ունեցաւ «Մի կտոր հացի պատմութիւնը», որը թարգմանուած է ռուսերէն, նոյնպէս և հայերէն լեզուներով։

Բայց Մասէն այնքան ոյժ և եռանդ ունէր, որ նա չէր կարող բաւականանալ տարրական դպրոցում ուսուցչութիւն անելով, և նա 60-ական թուերի սկզբում սկսեց կազմակերպել «Վերին-Հաենոսի գիւղական գրադարանների ընկերութիւնը» (Société des biblothèques populaires du Haut-Rhin), որին հիմք դրեցանոյն գաղափարները, որոնց պարտական է իւր գոյութեամբ Մասէի ուրիշ, աւելի մեծ գործը՝— «ժողովրդային կրթութեան դաշնակցութիւնը»։ Գիւղական գրադարանների հիմնելուն Ֆրանսիայում առաջին անգամ զարկ տուեց տէրութիւնը։ 1850 թուին, հասարակապետութեան նախագահի՝ պրինց Լուի Բոնապարտի հովանաւորութեան ակ սկիզբն առաւ մէկ ընկերութիւն, որը ինքն իրան նպատակ դրեց՝ բոլոր գիւղական համայնքներում գրադարաններ հիմնել։ Այդ ընկերութեան անդամները մեծ մասամբ բարձր դասակարգի ազնուականներ էին՝ եկեղեցականներ և աշխարհականներ։ Բայց այդ կառավարչական փորձը չը յաջողուեց և ընկերութիւնը քայքայուեց, հենց այն պատճառով որ գործի

գլուխն էին անցել։ Մասէն բոլորովին տարբեր սկզբունքով էր առաջնորդւում իւր ընկերութիւնը հիմնելիս. նորա նպատակն էր մասնաւոր նախաձեռնութիւն յարուցանել գիւղական հասարակութեան մէջ և ստիպել նրանց, որ իրանք հիմնէին գրադարաններ։ «Վերին-Հռենոսի գիւղական գրադարանների ընկերութեան» անդամները պարտաւոր էին՝ ամեն մէկն իւր գիւղում աշխատելու գրադարանի հիմնարկութեան համար։ Նոքա պիտի թոյլտուութիւն ստանային մէրից համալնքերէց գործին համակրող մարդիկ ճարէին, փող հաւաքէին և գրքեր բերել տային։ Տարեկան անդամավճարը 5 ֆրանկ էր։ Գլխաւոր գործունէութիւնը տեղական անդամների ձեռին էր։ Ընկերութեան դերը, ինչպէս Մասէն է ասում, կայանում էր նորանում միայն, որ «զարկ տուին։ Զարկը վերևից տուեց և չը յաջողեց, ասում է նա իւր յուշագրում, գիւղական գրադարանների մասին։—Ուրեմն ինքներս սկսենք գործը և ամեն մէկս առանձին աշխատենք գլուխ բերել այն, ինչ որ չը կարողացաւ անել տէրութիւնը։ Ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելու համար պէտք է գիւղի մէջ գործել, մէկ մարդից դէպի միւսը անցնելով և կենդանի խօսքով հարևանների վերայ ազդելով... Իսկապէս «Վերին-Հռենոսի գիւղական գրադարանների ընկերութեան» նպատակը չէ՝ հիմնել գիւղերում գրադարաններ, այլ ստիպել գիւղի բնակիչներին, որ նոքա իրանք հիմնէին։ Ի հարկէ այդ հիմնարկութեան նախաձեռնութիւնը չի կարող պատկանել անգրագէտ կամ կիսագրագէտ գիւղացիներին, որոնք գիւղական դասի բնակիչների մեծամասնութիւնն են կազմում. այդ պատճառով խօսքերս վերաբերում են գիւղի աւելի լուսաւորած բնակիչներին—նոտարներին, կալուածատէրերին և արդիւնաբերական շրջաններում—գործարանատէրերին։ Ամեն մէկ գիւղում կարելի է գտնել այդ տեսակի ինտելլիգենտներից մէկին, որը իւր սրբազան պարտականութիւնը կը համարէր՝ գրատուն հիմնելը և առհասարակ գիտութիւններ տարածելը ժողովրդի մէջ»։ Գրքերի ընտրութիւնը ամբողջովին յանձնուած էր գրադարանների տեղական հիմնադիրներին։ Ընկերութիւնը միայն ուղարկում էր պատրաստի եղած գրացուցակները և ամենայն կերպ նպաստում էր որ ընտիր գրքեր գիւղը հասցնեն, գրավաճառների հետ պայմաններ կապեն և ճանապարհածախսերը վճառեն։

«Վերին-Հուենոսի գիւղական գրադարանների ընկերութիւնը» միանգամից սկսեց եռանդով գործել. մի տարուց յետոյ նա ունէր արդէն 930 անդամ և 30 գրադարան, գիւղական համայնքներում հիմնուած։ Ընկերութեան տարեկան հաշուի մէջ Մասէն ասում է՝ թէ դաշնակցութիւնը պէտք է ձգտէ նոր տարր մտցնել գիւղական կեանքի մէջ՝ մտաւոր կեանք ստեղծելու։ «Մենք պէտք է աշխատենք, ասում է նա — որ ամէն մի գիւղ ունենայ իւր գրադարանը, ինչպէս ունի իւր եկեղեցին, իւր դպրոցը, իւր մէրիէն (mairie), որ գրադարանը մի անքակտելի ամբողջութիւն կազմի գիւղի մնացած հիմնարկութիւնների հետ։

Ժողովրդական գրադարանի հիմնարկութեան օգտին սկսուած շարժումը շատ արագ էր տարածւում, և Մասէն, այդ յաջողութիւնից դրդուած, մտածեց ընդլայնել ընկերութեան նպատակները և տարածել նորան ամբողջ Ֆրանսիայում։ Նոր ընկերութեան ծրագրի մէջ պիտի մտնէր ոչ միայն ժողովրդական գրադարաններ հիմնելը, այլ նա պիտի կազմէր նաև հրապարակական դասախօսութիւններ ժողովրդի համար, ժողովրդական ակումբներ, հասակաւորների երեկոյեան դասեր և դպրոցներ փոքրերի համար. նա առհասարակ ամէն կերպ պիտի նպաստէր ժողովրդի կրթութեանը և մտաւոր զարգացմանը։ Եւ ահաւասիկ 1866 թ. հոկտեմբերի 25-ին Մասէն տեղական լրագրում մի հրաւէր տպեց, առաջարկելով ամէնին, որոնց համար թանգ են ժողովրդի լուսաւորութեան շահերը, միանալ և «Ժողովրդային կրթութեան դաշնակցութիւն» կազմել։ Մասէի հիմնական սկզբունքին համաձայն, դաշնակցութիւնը պիտի հիմնուէր միայն ընկերութեանը համակրող անդամների մասնաւոր նախաձեռնութեան վերայ։ Մասէի կարծիքով հասարակ ժողովրդի կրթութիւնը և զարգացումը խիստ կարևոր նշանակութիւն ունի մանաւանդ Ֆրանսիայում, որովհետև, ընդհանուր ձայնատուութեան պատճառով, ժողովուրդն է գլխաւորապէս երկրի բախտը վճռողը։

Բայց ընդունելով հանդերձ «դաշնակցութեան» մեծ նշանակութիւնը ժողովրդի քաղաքական կեանքի նկատմամբ, Մասէն առաջին իսկ հրաւէրում վճռողաբար յայտնում է, թէ իւր առաջարկած ընկերութիւնը չը պէտք է ծառայի ոչ մի յայտնի՝ քաղաքական կամ կրօնական կուսակցութեան, այնպէս որ բոլորովին տարբեր համոզ-

մունքի տեր մարդիկ կարող են հաւասարապէս դաշնակցութեան մշակները լինել։

Մասէի նախագծի առանձնութիւնը նորանում էր կայանում, որ նորա դաշնակցութիւնը ոչ մի պարտաւորիչ ծրագիր չէր առաջարկում, այլ գործելու կատարեալ ազատութիւն էր տալիս «տեղական խմբերին», որոնց կազմակերպութեան վերայ պիտի աշխատէին դաշնակցութեան անդամները։ Ամբողջ շարժման ծանրակէտը այդ տեղական խմբերի մէջն էր։

Երբ Մասէն տեղական լրագիրներում հրատարակեց իւր հրաւէրները և սկսեց ստորագրութիւններ հաւաքել, զանազան կողմերից նամակով դիմում էին նրան խնդրելով, որ նա պարզի դաշնակցութեան նպատակները և նորա տարօրինակ կազմակերպութիւնը։ Շատերը զարմանում էին, որ ծրագիր չկար, նիւթական միջոցները ամենևին կենտրոնացրած չէին և տեղական խմբերին ինքիշխանութիւն էր շնորհուած։ «Էլ ի՞նչ նշանակութիւն ունի դաշնակցութիւնը, եթէ ամեն մի խումբ ուղածին պէս պիտի մշակէ իւր ծրագիրը և կանոնաւորէ իւր ելևմուտը», ասուած է այդ նամակներից մէկում։ Այս բոլոր տարակուսանքները Մասէն աշխատում է փարատել իւր յօդուածով նոր ընկերութեան նպատակների մասին, որը զետեղուած է դաշնակցութեան երկրորդ տեղեկագրի մէջ։ Ամենից առաջ նա շեշտում է որ իւր առաջարկած դաշնակցութեան մէջ ամենևին չը պէտք է լինի կենտրոնական վարչութիւն, որ իւր ձեռքում ամփոփէր դրամագլուխը։ Ընկերութեան կենտրոնը Բերլէն-հէյմումն է. այդտեղ ստացւում են բոլոր տեղեկութիւնները «խմբերի» գործունէութեան մասին, այստեղից էլ փոխադարձաբար ուղարկւում են ժողովներին զանազան կարևոր տեղեկութիւններ։ Այդտեղ են տպւում նաև ընկերութեան տեղեկագրերը։ Այդ բոլորը մեծ ծախսեր չեն պահանջում, այն պատճառով էլ դաշնակցութեան փողերի մեծ մասը նոյնպէս պիտի գտնւի տեղական խմբերի տրամադրութեան տակ։ Երբ որ և իցէ ընկերութեան նպատակն է մաքառել մի որ և է հասարակական հիմնարկութեան դէմ, ինչպէս օրինակ Կորդէնի դաշնակցութիւնը հացի օրէնքների դէմ—ասում է Մասէն—այն ժամանակ հասկանալի է, որ նա պիտի կենտրոնացնի իւր (նիւթական) միջոցները՝ գործին աւելի ոյժ և միութիւն տալու համար։ Բայց

այն չարիքը, որի դէմ մենք ենք կու�ում, տարածուած է ամէն տեղ և նորա դէմ շատ ու շատ տարիներ պիտի մաքառել։ Այս տեսակ հանգամանքներում, իմ կարծիքով, կենտրոնական գանձարանի պէտք չը կայ բոլորովին»... «Թող, ով ցանկանում է մեր դաշնակցութեան անդամ դառնալ, չը սպասէ ոչ ծրագրի հրատարակելուն, ոչ վարչութեան նշանակելուն — շարունակում է նա։ Թող նոքա ընկերութեան մէջ մտնեն վճռելով, որ առանց վարչութեան կատարեն, որ իրանք իրանց գործը կարգի դնեն, իրանք ծրագիր կազմեն իրանց գործունէութեան համար, իրանց պահանջներին համեմատ»։

«Խմբերի» ծրագրի առիթով Մասէն աւելացնում է, թէ այժմ արդէն հազար տեսակ այլ և այլ անուններով պատրաստուած են ապագայ դաշնակցութեան համար՝ Էլբեֆի «Արդիւնաբերող Ընկերութիւնը», որը պարապում է ժողովրդական գրադարաններ և կուրսեր հիմնելով, «Ժողովրդական կրթութիւն քարոզող միութիւնը» Նանտում, «Ոգտաւէտ գիտութիւններ տարածելու ընկերութիւնը» Մուլհուզում և ուրիշ շատերը։ Նոր խմբերը երկար չեն ման գալ ծրագրի յեռուից, նոքա կարող են փոխ առնել յիշեալ նախորդներից։ Մասէի կարծիքով, դաշնակցութեան դերը պիտի կայանայ նորանում, որ բոլոր գոյութիւն ունեցող ընկերութիւնների մէջ կապեր հաստատի և նորերը հիմնի նրանց նման։

Զը նայած որ Մասէի մտքերի նորութիւնը ու համարձակութիւնը մի քիչ տարակուսանք յարուցին, նորա դաշնակցութիւնը միանգամից մեծ համակրութիւն գտաւ հասարակութեան կողմից։ 1866 թ. նոյեմբերի 15-ին Մասէն տպեց իւր երկրորդ հրաւէրը և այդ օրը դաշնակցութեան սկզբնաւորութեան օրն է համարւում։ Առաջին երեք անդամներն և ստորագրութիւն տուողներն էին՝ մէկ որմնադիր, երկաթուղու մի կոնդուկտոր և մի քաղաքական սերժանտ։ (Տարեկան անդամավճարը մէկ ֆրանկից պակաս չը պիտի լինէր)։ Ինքը Մասէն չորրորդ ստորագրողն էր։ Այսպէս չորս ստորագրութիւն ունենալով, նա լրագրում հրատարակեց թէ դաշնակցութիւնը դրականապէս գոյութիւն ունի արդէն։ Մի ամիս անցած 510 անդամ կար, իսկ մի տարուց յետոյ նոցա թիւը հասնում էր 4792։ Միևնոյն տարում նոցա հետ միացան մի քանի ընկերութիւններ, որոնք նոյնպէս իրանց նպատակ էին դրել՝ ժողովրդի մէջ

կրթութիւն տարածել, ինչպէս օրինակ, վերև յիշած Էլբեֆի «Արդիւնաբերող Ընկերութիւնը» և ուրիշները։

Շիւիլի գիւղի խումբը առաջինն էր, որ կազմեց դաշնակցութեան գաղափարների քարոզութեան շնորհիւ։ Ահա այն նամակը, որ գրում է այդ խմբի հիմնագիրը Մասէին (տպած է դաշնակցութեան 3-դ տեղեկագրում 1867 թ. մայիսի 15-ին). «Ժողովրդական կրթութեան դաշնակցութեան» նախագծի շնորհիւ, որ դուք կազմել էիք, Շիւիլիի համայնքը ունի այժմ 140 հատորից բաղկացած ժողովրդական գրադարան, ուր այցելում են մեծ եռանդով։ Անցեալ կիւրակի գրադարանի շինութեան մէջ սկսեցին մի շարք հրապարակական դասախօսութիւններ։ Այդ տեսակ դասախօսութիւններ պիտի լինեն ամեն կիւրակի, իսկ դաշտային գործերը վերջացնելուց յետոյ — շաբաթը մի քանի անդամ։ Այդ տեսակ հրապարակական ընթերցանութիւնները զօրեղ միջոցներից մէկն են ժողովրդի մէջ օգտաւէտ գիտութիւններ տարածելու համար, որովհետև նոքա ուսումնասիրութիւն են յարուցանում անգրագէտ ունկնդիրների մէջ և դորանով ստիպում են նոցա այցելել հասակաւորների դասերը, որ մոռացիր ենք շուտով բաց անել։ Դաշնակցութեան անդամները միայն ունեն միայն տարի աւելի ընդլայնել իրանց գործունէութեան շրջանը։ 1867 թ-ի անդամավճարները գրադարանի հիմնարկութեան վերայ ծախսեցան, իսկ հետևեալ 1868 թ-ին խումբը կամենում է այսպէս կարգադրել իւր եկամուտը՝ մի երրորդ մասը գրադարանի պահպանութեան համար կը ծախսի, իսկ երկու երրորդականը կը տան համայնքի ուսումնարանին, որպէսզի երեխաները ձրիապէս սկզբնական ուսում ստանան։

Շիւիլիի խմբի հիմնելը մի նշանաւոր դէպք էր դաշնակցութեան պատմութեան մէջ. առաջին անգամ գործնականապէս իրագործուեցան նորա գաղափարները։ Դա ցոյց տուեց որ առանց հեռևանքի չը մնացին Մասէի յորդորները, որոնց նպատակն էր մասնաւոր նախաձեռնութեան ոգին յարուցանել հասարակութեան մէջ։ Հետևեալ խումբը, որ կազմուեց դաշնակցութեան գաղափարների ազդեցութեամբ — Մէց քաղաքում էր։ Այդ խմբին զօրաւոր դիմադրութիւն ցոյց տուին կղերականները, որոնք հէնց սկզբից բացարձակ իրանց թշնամի յայտնեցին նոր շարժմանը։ Մեցի արքեպիսկոպոսը նզովեց այդ խմբի կազմողներին,

որովհետև «նոքա սիստեմաբար աշխատում էին կրօնի վարկը ձգել»։ Բայց կղերականների թշնամութիւնը չէր կարող խանգարել դաշնակցութեան գործը, որ շարունակ աճում և ամրանում էր։ Խմբեր էին կազմւում Նանսիում, Տուլուզում, Հաւրում, Ռուանում, Մարսէյլում։ Վերջապէս Պարիզում բացւեց դաշնակցութեան մի ճիւղը Ֆլամմարիօնի նախագահութեամբ։ Այդ խումբը վերջերումս մեծ դեր էր խաղում դաշնակցութեան գործում, միջնորդ դառնալով Պարիզի գրավաճառների և գաւառներում գրադարաններ հիմնողների միջև։ Բացի քաղաքներից բազմաթիւ խմբեր էին հիմնւում նաև գիւղերում։ Առհասարակ, Մասէի կարծիքով, դաշնակցութեան անդամները պէտք է աշխատէին առաւելապէս գիւղացիների մէջ գիտութիւն տարածել, որովհետև նոցա մէջ կրթութիւնը աւելի ուշ և աւելի դժւար է մտնում, քան թէ քաղաքի ստորին դասի բնակիչների մէջ։

Աւելի մանրամասն զննենք տեղական խմբերի գործունէութիւնը։ Ամենից առաջ խումբը գրադարան էր հիմնում։ Դաշնակցութեան անդամները հաւաքւում էին նշանակւած օրը, իրանց միջից ջոկում էին վարչութիւն, ստորագրութեամբ փող էին հաւաքում և մէրից թոյլատրութիւն էին խնդրում գրադարան բանալու համար։ Երբ բաւական փող էին հաւաքում, գրքեր էին առնում, տուն էին վարձում և յայտնում էին, թէ գրադարանը բացւած է։ Գրքերից օգտւելու համար չնչին վարձ էին վերցնում՝ ամիսը մօտաւորապէս 5 սու (կամ 25 սանտիմ, ոսկով մօտ 6 կոպ.)։ Առհասարակ գրադարանը բացւելիս գրքերի թիւը շատ չնչին էր լինում, բայց յետոյ շատ մեծանում էր, և երբեմն նշանաւոր գումարի էր հասնում։ Օրինակ, Վերսայլի գրադարանը բացւելիս 100 գրքից աւել չունէր, իսկ 1889 թւին նորա մէջ կար 16,500 հատոր։ Տուլուզի գրադարանում կար 4,900 գիրք։ Նամրոնֆոժիրոլի գրադարանում—2860 գիրք և այլն...

Դաշնակցութեան գոյութեան ոկզբում ժողովրդի համար առանձին գրականութիւն չը կար Ֆրանսիայում և ժողովրդական գրադարանների մէջ մտնում էին այնպիսի գրքեր, որոնք նշանակւած են հասարակութեան միջին դասի համար։ Այստեղ բերենք ժողովրդական գրադարանի գրացուցակը, որը կազմել է Ֆրանկլինի ընկերութիւնը։ (Այդ ընկերութիւնը հիմնւած է Պարիզում ժիւլ Սիմոնի նախագահութեամբ, նորա նպատակն է՝ էժան գնով գրքեր ուղարկել

գիւղերի և ուսումնարանների գրադարաններին)։ Այդ գրացուցակը օրինակելի էր համարում և շատ գրադարաններ, իրանց հիմնարկութեան ժամանակ, նորանից օգուտ են։ Մեզ համար նա հետաքրքիր է մանաւանդ ինչպէս ապացոյց, որ Ֆրանսիայում ժողովրդի ստորին դասերը համեմատաբար բարձր են զարգացմամբ։ Գրացուցակը ունի մինչև 500 գիրք և բաժանուած է մի քանի մասերի։ Առաջնում, այն է կրօնի և բարոյագիտութեան բաժնում՝ զետեղուած են ի միջի այլոց Բոսսիւէի, Ֆենելոնի, Շատոբրիանի երկասիրութիւնները, Պասկալի «Մտքեր»-ը, Ժիւլ Սիմոնի «Պարտիքը»։ Պատմական մասը նուիրուած է առաւելապէս Ֆրանսիայի պատմութեանը և այնտեղ զետեղուած են, օրինակ, այնպիսի լուրջ և ընդարձակ շարադրութիւններ, ինչպէս են Հանրի Մարտէնի՝ Ֆրանսիայի պատմութիւնը 17 հատորով, նոյնպէս նորա՝ Ֆրանսիայի համառօտ պատմութիւնը 4 հատորով, յետոյ գալիս են Օգիւստեն Թիերիի պատմական շարադրութիւնները, Վոյլտերի՝ «Լուդովիկոս XIV-ի դարը», Միշնէի և Թիերի շարադրութիւնները յեղափոխութեան պատմութեան մասին, Հերոդոտի և Տացիտոսի գրուածքները, Մակոլէյի՝ «Անգլիայի պատմութիւնը»։ Ֆրանսերէն վէպերից կամ թատերերգութիւններից քիչերն են առաջարկուած (չը պէտք է մոռանալ, որ գրացուցակը շինուած է վաթսունական թուերում). Կորնէյլ, Ռասին, Մոլիեր, «Պոլ և Վիրգինէ», Բալզակի՝ «Էժենի Գրանդէ»-ն, Ժորժ Սան-ի վէպերը ժողովրդական կեանքից, Ժիւլ Վերնի և Էրկման-Շատրիանի ու մի քանի մանր հեղինակների գրուածքները—ահա այն բոլորը, ինչ որ հայրենի գրականութիւնից առաջարկում էր ժողովրդին կարդալու։ Թարգմանած վէպերի թիւը աւելի մեծ է, մանաւանդ անգլիացի և ամերիկացի հեղինակներից, օրինակ, գրացուցակում մտցրած են Վալտեր Սկոտտի բոլոր վէպերը, Դիկկենսի մի քանի վէպերը, Սուիֆտի՝ «Գուլլիւերի ճանապարհորդութիւնը», «Ռոբինզոն Կրուզէն», «Եղբայր Թոմի տնակը», Կուպերի, Մայն-Ռիդի և Մարիեաի վէպերը։ Ռուսաց գրականութիւնից երկու գիրք են առաջարկուած. Պուշկինի՝ «Կապիտանի դուստրը» և Տուրգենևի, «Որսորդի օրագիրը»։ Բնագիտական գրքերից՝ ցուցակում նշանակուած են ընդամենը 24 հատ։ Նրանց մէջ են Bibliotèque utile-ի մի քանի հրատարակութիւնները, 50 սանտիմ ամեն մէկը, որոնք, պարզ

բան է, նշանակված են աշակերտների համար։ Այդպէս են—Բրոսիէի՝ «Histoire de la terre», Մարգոլէի «Les phénomènes de la mer» և այլն։ Ցեռոյ գալիս են մանանագիտական գրքեր հողագործութեան և գիւղատնտեսութեան այլ և այլ ճիւղերին վերաբերեալ, առողջապահական գրքեր և վերջապէս քաղաքական տնտեսութեան վերաբերեալ գրքեր։ Վերջին տեսակից ընդամենը 14 հատ են և նոցա թւում գտնւում են Բաստիայի և Սէյ-ի գրուածքները։

Բացի գիւղական գրադարաններից դաշնակցութիւնը յանձն առաւ գրադարաններ հիմնել բանտերում, հիւանդանոցներում և զօրաններում։

Դժբաղդաբար Մասէի տեղեկագրերում շատ քիչ ծանօթութիւններ կան, թէ ժողովուրդը ինչպիսի գրքեր է կարդում առաւելապէս, բայց այդ քիչ տեղեկութիւններից էլ երևում է որ ընթերցողների գրական ճաշակը ամենն տեղ միատեսակ չէ։ Մեծ մասամբ ամենից սիրուած գրքերը՝ վէպերն են, մանաւանդ յաջողութիւն են վայելում Ժիւլ Վերնի, Մայն-Ռիդի և Էրկման-Շատրիանի վէպերը։ Համարեա բոլոր նամակներում, որ գրել են Մասէին գրադարանների հիմնողները, յիշում է թէ ինչ յափշտակութեամբ են կարդում վերջինիս վէպերը։ Բայց յիշում են նոյնպէս, որ ժողովուրդը հետաքրքրւում է նաև գիտական գրուածքներով։ Օրինակ բերենք մէկ գրադարանպետի նամակը. այդ գրադարանը հիմնել է Ռեյմսի խումբը Վիլլեմինոի արհեստանոցներում, ուր բանում են մի քանի հարիւր մարդ։ «Ընթերցողների մեծամասնութիւնը, կարելի է ասել, կլանում է գրքերը—գրում է նա Մասէին։—Կանայք էլ տղամարդոց պէս եռանդով են կարդում։ Հետևեալ նիստում ես պիտի խնդրեմ խմբի անդամներին գրքերի թիւը կրկնապատկելու։ Մի շատ հետաքրքիր երևոյթ՝ վէպերի պահանջը ամենից քիչ է։ Ամենից շատ ցանկանում են պատմական և բնագիտական գրքեր և ուղեգրութիւններ»։

Վերջերը դաշնակցութիւնը հիմնեց մի շատ օգտաւէտ բան, որ յարմար է մանաւանդ գիւղական համայնքներում, ուր այնպէս դժբար է գրքեր ձեռք բերելը։ Դա այսպէս կոչուած «Թռուցիկ գրադարաններն են (Bibliotèques roulantes), որոնց նպատակն է գրքեր մատակարարել գիւղական ուսումնարանների աշակերտներին։ Դոքա հետևեալ կերպով են շինւում. կազմւում է կենտրոնական վարչութիւն,

որը արկղներով գրքեր է ուղարկում ուսումնարաններին։ Գրքերը, մէկ ուսումնարանում կարդալուց յետոյ, ուղարկւում են միւսը, այնուհետեւ երրորդը և այլն, այսպիսով միևնոյն գրքերը շրջում են բոլոր, իրարից մօտ գտնուող ուսումնարանները։ Այդ կարգը մտցրեց առաջին անգամ Նանսիի տասը քաղաքային ուսումնարաններում և շրջակայքի 16 գիւղական ուսումնարաններում։

Ժողովրդական գրադարաններ հիմնելուց զատ դաշնակցութեան անդամները կազմում էին հրապարակական դասախօսութիւններ ժողովրդի համար։ Դաշնակցութեան հիմնելուց 3 տարի յետոյ 16 ժողովներում արդէն այդպիսի ընթերցանութիւններ էին կազմւած։ Գիւղերում ընթերցանութիւններ կազմելու գլխաւոր դժւարութիւնը դասախօսների պակասութիւնն էր, բայց այդ խոչնդոտը ևս հնարաւոր եղաւ վերացնել։ Շատ գիւղերում այդ գործը յանձն առան միևնոյն գիւղական ինտելիգենտները, որոնց դիմել էր Մասէն իւր առաջին յօդւածներով։ Այսպէս Ռիբովիլ գիւղում (Էլզասում) դեղավաճառը կարդում էր քիմիայից, մէրը ասողաբաշխութիւնից, քահանան-բուսականութիւնից։ Գիւղի բնակիչներից մէկը, որը մի քանի տարի ապրել էր Ամերիկայում, ծանօթացրեց այդ երկրի վարք ու բարքի հետ։ Դաշնակցութեան քաղաքաբնակ անդամները նոյնպէս սկսեցին ժողովրդական ընթերցանութիւններ կազմել շրջակայ գիւղերում։ Այսպէս, Մեցի լսարանի պրոֆեսսոր Վակկան գնաց դասախօսութիւն անելու Սոլն գիւղում, ուր որ տեղական խումբը որոշել էր մի շարք հրապարակական դասախօսութիւններ կարդալու. հողագործութեան մասին։ Դաշնակցութեան աղդեցութեան տակ մէկ անասնաբոյժ Բեֆրեմոնից սկսեց մանգալ շրջակայ գիւղերում և դասախօսութիւններ կարդալ՝ անասունների վերայ կանոնաւոր կերպով հոգ տանելու մասին։ Վիրնոն գիւղաքաղաքում կազմւեց ամբողջ ընկերութիւն, որի նպատակն էր հարևան գիւղերում ժողովրդի համար ընթերցանութիւններ կազմել՝ հողագործութեան և գիւղատնտեսութեան ուրիշ ճիւղերին վերաբերեալ։ Որքան սիրով էր այցելում այդ դասախօսութիւնները ժողովուրդը, կարելի է եզրակացնել հետևեալ պատմութիւնից, որ Մասէն բերում է իւր տեղեկագրերից մէկում. բժիշկ Տենտինգը, որը 5 տարւայ ընթացքում կարդացել էր 200-ից աւել ժողովրդական դասախօսութիւններ Իոննայի նահանգի գիւղերում,

պատմում էր դաշնակցութեան տեղական անդամների տարեկան նիստում, թէ մի անդամ դասախօսութիւնից յետ դառնալիս պատահում է մէկ ժանդարմ ատիճանաւորի, որը ասում է. «Դուք ստիպեցիք ինձ զուր տեղը ճանապարհ գնալու։ Ես ուղարկուած էի այստեղ կարգ պահպանելու գինետներում, բայց նոքա ձեր շնորհիւ համարեա դատարկ էին»։

Գիւղերում դասախօսութիւնները առհասարակ մանագիտական բնաւորութիւն էին կրում, որովհետև նոքա գործնական հարցեր էին շօշափում հողագործութիւնից և գիւղատնտեսութեան այլ ճիւղերից։ Իսկ քաղաքներում ընթերցանութիւնները աւելի բազմատեսակ և հետաքրքիր էին լինում։ Օրինակ, Նանսիի խումբը կարդում էր հրապարակական դասախօսութիւններ Ֆրանսիայի բանւորների դրութեան մասին մինչև 1889 թիւը, Ժաննա դ'Արկի մասին, առողջապահութեան մասին և այլն։

Ժողովրդական դասախօսութիւնները ծառայում էին իբրև ներածութիւն չափահասների կուրսերի համար, որոնք մի քանի ժամանակից յետոյ բացուեցան դաշնակցութեան համարեա բոլոր շրջաններում։ Այդ կուրսերին օրինակ եղան Գեբուիլլերի և Միւլհաուզէնի բանւորների երեկոյեան կուրսերը, որոնք բացուեցան 50-ական թուականներում։ Այդ գործը սկսեց Ժան Բուրկարը՝ Գեբուիլլերի գործարանների ատրը։ Սկզբում նա բանւորների համար գրադարան հիմնեց, յետոյ նրանց առաջարկեց իրար մէջ համաձայնուել և միասին ընտրել այն առարկան, որը ամենից շատ հետաքրքրում է նրանց։ Ինքը խոստացաւ տալ նոցա համապատասխան ուսուցիչ և ուրիշ յարմարութիւններ։ Սկզբում դժուար էր այդ գաղափարը բանւորների շրջանում պատուաստել։ Ամենից առաջ խմբական երգեցողութեան համար խումբ կազմուեց։ Յետոյ գործակատարները խումբ կազմեցին անգլիերէն սովորելու համար, դորանից յետոյ բանւորները արդէն սկսեցին միանալ՝ ֆրանսերէն լեզու, թուաբանութիւն, գծագրութիւն և ուրիշ բաներ սովորելու համար։ Երբ արդէն արւած էր առաջին քայլը, գործը արագ կերպով առաջ գնաց ու շուտով աշակերտները այնքան շատացան, որ գրադարանի շինութիւնը չափազանց նեղութիւն էր անում, և Ժ. Բուրկարը ստիպուեց նոր տուն շինել «բանւորների ճեմարանի» համար, ինչպէս անուանում է Մասէն այդ կուր-

սերը։ Այդ տան մէջ, բացի 3 դասատուն-դահլիճներից, կային գրադարան և լաբորատորիա՝ ֆիզիկայով և քիմիայով զբաղելու համար։ Երիտասարդները և կուրսերի պատրաստութիւնը միասին գործարանատիրոջը նստեցին մօտ 60.000 ֆրանկ։ Բացի Բուրկարի բանուորներից, այդ երեկոյեան կուրսերը այցելում էին հարևան գիւղերի բնակիչներից շատերը։ Ուսումը ամբողջովին ձրի էր։ 1863 թ-ի ցուցակից, որ բերում է Մասէն, երևում է որ աշակերտները ամենից շատ պարապելիս են եղել գծագրութեամբ (68 հոգի), յետոյ ֆրանսերէն լեզուով (53) և քիմիայով ու ֆիզիկայով (52)։ Ինչպէս երևում է, ընդհանուր զարգացողական առարկաները, ինչպէս գրականութիւնը, պատմութիւնը և աշխարհագրութիւնը, առանձին հարցասիրութիւն չէին պատճառում և այդ դասերը ամենից քիչ ունկընդիրներ ունէին (10—11 հոգի)։ Գերբիլլերի օրինակով 1866 թ. նոյն տեսակ կուրսեր բացուեցան Միւլհաուզէնում և այդտեղ 500 հոգի աշակերտ գրուեցան։ Այդ թիւը, որ ցոյց է տալիս թէ որքան մեծ է բանուորների մէջ գիտութեան ծարաւը, աւելի նշանաւոր կը լինի, եթէ աչքի առաջ ունենանք, որ Միւլհաուզէնում, ինչպէս և ուրիշ տեղեր, բանուորները պարապում էին օրեկան 12 ժամ և որ երեկոյեան կուրսերին ստորագրողներից շատերը բնակւում էին մօտակայ գիւղերում. դոքա, գործը վերջացնելուց յետոյ, մի քանի վերստ էլ ճանապարհ պիտի կտրէին տուն հասնելու համար։ Զը նայելով որ պարտաւոր էին ամեն օր երկար բանելու, նոքա սակաւաթիւ ազատ ժամերը նուիրում էին իրանց գիտութեան փոքրիկ պաշարը մեծացնելուն։ Այս դէպքում բանուորները ցոյց տուին, որ լաւ են հասկանում իրանց իսկական շահերը։ Ուրիշ երկիրների պատմութիւնից նոյնպէս կարելի է բազմաթիւ օրինակներ բերել, երբ բանուորները նոյնպէս սիրով վերաբերուել են դէպի ուսումը։ Ցոյց տանք հէնց անգլիացի բանուորների դաշնակցութիւնները, որոնք առանց գործարանատիրոջ մասնակցութեան և օգնութեան, իրանք կազմում են գրադարաններ, հրապարակական դասախօսութիւններ, մինչև անգամ մասնագիտական ուսումնարաններ, հմուտ բանուորներ պատրաստելու համար։ Թէև ֆրանսիացի բանուորները ցոյց չեն տալիս այնպիսի ձեռներէցութիւն և ինքնավստահութիւն, որ Անգլիայի բանուոր դասակարգի յատկանիշն է, բայց նոցա մէջ էլ նկատւում է զօրաւոր

ձգտում դէպի լուսաւորութիւնը և այդպիսով նոքա բերրի հող են ներկայացնում դաշնակցութեան լուսաւոր գործունէութեան համար։

Գեբուիլլերի և Միլհաուզինի կուրսերի կազմակերպուիթիւնը ուսումնասիրելուց և ուրիշ երկիրների նոյնանման հիմնարկութիւնների հետ ծանօթանալուց յետոյ, Մասէն եռանդով սկսեց քարոզել, որ նոյնպիսի կուրսեր բացուեն Ֆրանսիայում և դաշնակցութեան խմբերը, իրանց գոյութեան սկզբից, ձեռնարկեցին այդ գործին։ Կոլմարում, Մեցում, Դիէպպում, Մարսէյլում—ամեն տեղ էլ բացւում էին այդ տեսակ կուրսեր, ուր այցելում էին մեծ սիրով։ Դոցա ծրագիրը մօտաւորապէս ամեն տեղ միևնոյն էր. ամեն տեղ աւանդւում էին սկզբնական ուսումնարանի առարկաներ, ինչպէս քերականութիւն, թուաբանութիւն, ու գծագրութիւն, յետոյ բնական գիտութիւններ—ֆիզիկա, քիմիա և առողջապահութիւն։ Մի քանի շրջաններում այդ ծրագիրը բաւական ընդարձակել էին. Մեցում բացի այդ բոլորից՝ դաս էին տալիս պատմութիւնից և ներկայ իրաւունքից (действующее право)։ Նոյն ընդարձակ ծրագիր մշակեց Association phocéene-ը Մարսէյլում։ Դասընթացի մէջ մտնում էին բարոյագիտութիւն, սոցիոլոգիա, տիեզերագրութիւն, կրօնական պատերազմների պատմութիւն, անգլիերէն և մինչև անգամ իտալերէն լեզուներ։ Գեբուիլլերի օրինակով, աշակերտները միշտ իրանք էին ընտրում պարապման առարկան և պարտաւոր չէին բոլոր դասերը լսել։ Այդ կուրսերը ամեն տեղ էլ ծրի էին։ Դաշնակցութեան Պարիզի խումբերից մէկը՝ cercle de la rue Villehordonin, այդ տեսակ կուրսեր հիմնեց պրոֆեսորների անտերում։ Այդ ոնային կուրսերը այն առաւելութիւնը ունին, որ աւելի սերտ կապեր են հաստատում ուսանողների և ուսուցիչների մէջ։ Նաբաթը մէկ անգամ գրական երեկոյթ էին կազմում, ուր հաւաքւում էին կուրսերի (ներկայ) և հին ուսանողները և ուր խօսում էին կարդացած գրքերի մասին։

Որովհետև կուրսերը և ընթերցանութիւնները միայն ձմեռն էին տևում, մի քանի խմբեր, իրանց աշակերտների և ունկնդիրների հետ յարաբերութիւնը չը կտրելու համար, նրանց հետ միասին կիւրակնօրեայ զբօսանքներ և արշաւանքներ էին կատարում ամառուայ ամիսներում։ Զբօսանքներին նպատակ էին տրւում՝ գործարաններ և

արհեստանոցներ այցելել, որոնք կարող էին հետաքրքիր և օգտակար լինել բանվորների համար։

Դաշնակցութեան նպատակներից մէկն էր՝ երեխայոց համար ուսումնարաններ շինելը. բայց առաջին տարիներում այդ գործը բաւական ծանր էր գնում, մասամբ նորա համար, որ ուսումնարանների հիմնարկութիւնը համեմատաբար մեծ ծախսեր էր պահանջում, մասամբ էլ նորա համար որ այդ պահանջը այնքան ստիպողական չէր, որովհետև շատ երեխաներ ուսումնարան չէին գնում ոչ թէ դպրոցների պակասութեան պատճառով, այլ ծնողների աղքատութեան պատճառով։ Ուստի դաշնակցութեան անդամները աշխատում էին գլխաւորապէս չքաւոր երեխաներին դպրոց ուղարկել, նրանց ուսման վարձը վճարելով (ինչպէս օր., Միւլհաուզէնում) կամ նիւթական օգնութիւն անելով այն ընտանիքներին, որոնք չքաւորութեան պատճառով չեն կարողանում սկզբնական ուսում տալ իրանց զաւակներին։ Հաւրի խումբը հետևեալ նպատակներն է դնում իրան. «խումբը մտադիր է փնտրել 7 մինչև 12 տարեկան երեխաներ որոնք դպրոց չեն յաճախում, ամեն կերպ աշխատել նոցա ծնողներին համոզելու որ իրանց զաւակներին ուսումնարան ուղարկեն, երեխաներին յարմար շորեր և գրքեր տալ, ուսման վարձը վճարել և նոցա յառաջադիմութեանը վերահսկու լինել։ Այդ բոլորին հասնելու համար ամեն մի թաղում (Հաւրում 28 թաղեր կան) նշանակում են երկու անդամ, որոնց պարտականութիւնն է փնտրել չը սովորող երեխաներին և ամեն միջոց գործ դնել նոցա ուսումնարան տանելու համար»։ Ուրիշ շատ խմբեր էլ անում էին միևնոյնը. օրինակ Պոնտ—Օտոմերի խմբի ծրագրում ուղղակի հետևեալ յօդուածն ենք կարդում. «chasse aux enfants, qui ne vont pas à l'école»։ Այդ խմբի հիմնադիրը—գրում է Մասէն—ինքը անձամբ «որսում է փոքրիկ շրջմոլիկներին». դասի ժամանակ փողոցում հանդիպող ամեն մի երեխայի, կոնից ուղղակի բռնում է ու տանում ուսումնարան վճարելով նորա թոշակը։ Խմբի անդամների պարտականութիւնն էր նոյնպէս վերահսկու լինել, որ իրանց հոգատարութեան յանձնուած երեխաները ճշտութեամբ յաճախէին դպրոցը։ Միւլհաուզէնի խումբը բացաւիկ դէպքերում մինչև անգամ հետևեալ միջոցն էր գործ դնում ծնողներին հարկադրելու որ իրանց զաւակներին ուսումնարան

ուղարկեն. որովհետև շատ ընտանիքներում 10—12 տարեկան երեխաները արդէն աշխատանք են անում, որից նոքա զրկւում են երբ երեխաները ուսումնարան են գնում։ ուստի խումբը վճարում էր այդ ընտանիքներին նոյն գումարը, որը նոքա պիտի ստանային իրանց որդիների աշխատանքից. այսպիսով նրանք սկզբնական ուսում էին ստանում առանց նիւթական վնաս պատճառելու իրանց ծնողներին։ Շատ խմբեր շինում էին նաև այսպէս ասած, «garderies de poupons» կամ «մնուրներ» ամենափոքրիկ երեխաների համար, որպէս զի նոցա մեծ քոյրերին և եղբայրներին ազատեն նոցա վերայ հսկելուց, որը-ուսումնարան գնալու գլխաւոր արգելքներից մէկն էր։ Այդպիսի մնուրներ շինելը ամեն տեղ կանանց գործն էր։ Առհասարակ կանայք նշանաւոր դեր էին խաղում դաշնակցութեան գործում։ բաւական է յիշել Վերսայլի խմբի նախագահին՝ m-me Hippolite Meunien-ին, որը քսանից աւելի գիւղերում գրադարաններ է հիմնել և այդ բոլոր գիւղերում ամբողջ շարք ընթերցանութիւններ է կազմել ժողովրդի համար։

Վերջապէս դաշնակցութեան անդամները սկսեցին հիմնել այսպէս կոչուած ժողովրդական ակումբներ՝ գերմանական Arbeiterbildungsvereine-ի օրինակով։ Առաջին ժողովրդական ակումբը Ֆրանսիայում բացւեց 60-ական թւերին Միւլհաուզենում, ուր դորա համար կառուցւեց մի առանձին շինութիւն, որի մէջ պարունակւում էին գրադարան, թանգարան և մի քանի դահլիճներ նստաշանդէսների համար։ Բանւորները արձակ ժամերին գալիս են այստեղ իրար հետ խօսելու, լրագիրներ կարդալու, դոմինո և ճատրակ (շախմատ) խաղալու (թղթախաղը բոլորովին դուրս է ձգւած այդ տեսակ ակումբներից)։ Նորա օրինակով ուրիշ խմբեր ևս շինում էին ժողովրդական ակումբներ։ Առաջին իսկ տարում բազմաթիւ ակումբներ շինւեցան (երկու ակումբ 1750 անդամներով Տաննում, Գերբիլլերում և այլ տեղեր)։ Մի քանի խմբեր, միջոցների աղուութեան պատճառով, գրադարանի շինութեան մէջ էին ակումբ հիմնում։ Երբեմն ակումբին կից շինւում էին բնագիտական և արհեստագիտական թանգարաններ, որոնք զօրաւոր նպաստ էին հրապարակական դասախօսութիւններին և երեկոյեան կուրսերին։

Այս համառօտ նկարագրութիւնից երևում է, թէ որքան ընդար-

ձակ և բազմակերպ գործունէութիւն ունէր դաշնակցութիւնը։ Երեք տարի չ՝անցած (1867-ից մինչև 1870-ի սկիզբը), նա 17,856 անդամ ճարեց և 59 տեղական խմբեր հիմնեց։ Այդպիսի ընդարձակ ձեռնարկութիւնը պահանջում էր արդէն աւելի կանոնաւոր և կենտրոնացած գործավարութիւն. այդ պատճառով Մասէն Պարիզի խմբին յանձնեց կենտրոնական բիւրօն և տեղեկագրերի տպագրութիւնը, իսկ ինքը գնաց՝ գաւառներում դաշնակցութեան գաղափարները անձամբ քարոզելու։

Ֆրանսիական-գերմանական կռուի ժամանակ դաշնակցութիւնը հարկաւ դադարեցրեց իւր գործունէութիւնը. բայց հէնց որ կայացաւ. հաշտութիւնը, ամենքը ահագին եռանդով սկսեցին գործել։ «Դպրոցի ուսուցիչը մեզ յաղթեց, նա ինքն էլ մեր վրէժը կառնի»— ասում է Մասէն։ Եւ ահա ուսուցչի գործունէութեանը կատարեալ ընդարձակութիւն տալու համար, դաշնակցութիւնը վճռեց սկզբնական ուսումը Ֆրանսիայում պարտադիր և ձրի դարձնել ուէրութեան միջոցով։ 1871 թ-ի հոկտեմբերին բոլոր գաւառական խմբերին խնդիրներ և ստորագրութեան թերթեր ուղարկեցին։ Այդ ձեռնարկութեան փոստի ծախսերը ծածկելու համար, դաշնակցութեան, յանձնաժողովը ուղարկելով այդ թերթերը, խնդրում էր ամենին իրանց ստորագրութեան հետ մէկ-մէկ սու տալ (մօտ մէկ կոպէկ)։ Այդ պատճառով ամբողջ «խնդրամատոյց շարժումը» (mouvement pétitionnaire) վերջերում կոչուեց «կոպէկի շարժում ազիտութեան դէմ»։ Խնդիրները այսպիսի հետևանք ունեցան. կէս տարի անցած 847.761 ստորագրութիւն էր հաւաքուել, իսկ մի տարի յետոյ աւելացան էլի 69.506 ստորագրութիւն։ Բոլոր ստորագրութիւնների թիւը 1.267.267-ի էր հասնում; հաշուելով նաև կռուից առաջ Ստրասբուրգում հաւաքած ստորագրութիւնները։ Այդ ամենախոշոր խնդրամատոյց շարժումն էր, որ երբ և իցէ եղել էր Ֆրանսիայում։ Մասէն կարող էր հպարտութեամբ ասել որ իւր աշխատանքը իզուր չը կորաւ և դաշնակցութիւնը իւր նպատակին հասաւ։ Մի համեստ ընկերութիւն, որի նպատակն էր կրթութիւն տարածել ժողովրդի մէջ և որը հիմնուել էր Էլզասի բոլորովին յետընկած գիւղի անյայտ և աղքատ ուսուցչի անխոնջ եռանդի շնորհով—այդ ընկերութիւնը աճեց և դարձաւ ազգային մեծ գործ և Ֆրանսիայի ազգային կրթութեան նշանաւոր

գործոն։ Իհարկէ գրեթէ անհնար կը լինէր մէկուկէս միլիոն ստորագրութիւն հաւաքել, եթէ ամբողջ Ֆրանսիայում սփռուած չը լինէր դաշնակցութեան տեղական խմբերի ցանցը, որի շնորհիւ մի տեսակ կապ հաստատուեց այդ ասպարիզում գործող մարդկանց մէջ։ Ֆրանսիայի բոլոր քաղաքներում և գիւղերում սփռուած, դաշնակցութեան անդամները ջերմ համակրութիւն ցոյց տուին պարտադիր և ձրի ուսման գաղափարին և ամենքն էլ եռանդով սկսեցին ստորագրութիւն հաւաքել։ Հողը արդէն պատրաստ էր դորա համար և ահա թէ ինչու այնպիսի փայլուն արդիւնք ստացուեց։

Բայց այդ շարժումը սաստիկ տրտունջ յարուցեց կղերականների կողմից, որոնք նորա ծագման միջոցին արդէն չափազանց չարամտութեամբ վերաբերուեցան, այդ շարժման մէջ իրանց համար վտանգաւոր թշնամի տեսնելով։ Ազգային ժողովը չուզեց հերթական հարցերի շարքում դնել ձրի և պարտադիր ուսման խնդիրը և խնդիրները ուղարկուեցան Դիւպանլուին, որը նախագահում էր պարլամենտից նշանակուած ժողովրդային կրթութեան յանձնաժողովին։ Նախագահը ցանկանում էր խնդիրները անուշադիր թողնել, բայց դաշնակցութեան անդամները վճռողական մարդիկ էին. նոքա շարունակ եռանդով ձգտում էին դէպի իրանց նպատակը։ Պարիզի խմբի նախագահ Էմ. Վոշէն, հեռուեալ հնարը գտաւ, խնդիրների ազդեցութիւնը զօրացնելու համար. նա դիմեց բոլոր ժողովրդի ընտրեալ երեսփոխաններին — պարլամենտի անդամներին, գաւառական խորհրդականներին, մերերին և այլն — և խնդրեց նոցա ձեռք քաշել խնդիրների տակ։ Հինգ շաբթուայ մէջ ստորագրուեցին 35 հազար ընտրեալ պատգամաւորներ, որոնք Ֆրանսիայի 14 – 15 միլիոն բնակիչների ցանկութիւնները արտայայտողն էին հանդիսանում։ Բայց դժբաղդաբար այդ շարժման ամենատաք ժամանակը Թիերի նախագահութիւնը ընկաւ և իշխանութիւնը անցաւ դաշնակցութեան վազեմի թշնամի՝ կղերականութեան ձեռքը։ Դժբաղդ օրեր վերայ հասան դաշնակցութեան համար. պրեֆէկտները արգելում էին հրապարակական դասախօսութիւնները, փակում էին գրադարանները և ժողովրդական ակումբները։ Ուսուցիչներին հրաման էր տրուած դաշնակցութիւնից ոչինչ նպատաստ չ՝ընդունել, ուսուցիչներին պատուիրուած էր դուրս գալ ընկերութեան անդամակցութիւնից։ Մինչև անգամ Հռոմայ Պապը

խառնուեց այդ գործում և իւր կանոնական կոնդակում առ 1872 թուի նոյեմբերի 22, որոտաձայն նզովքներ թափեց այդ «մեծասակար» հիմնարկութեան գլխին։ Կարելի էր կարծել թէ դաշնակցութիւնը ամանուլ տուաւ արդէն իւր գործը և այդքան ջանքն ու աշխատութիւնը իզուր կորան։ Բայց դաշնակցութեան գաղափարները այնքան խոր արմատ էին գցել Ֆրանսիայի հասարակութեան մէջ, որ չը նայած նորա դէմ յարուցուած հալածանքին՝ 1876 թուին նա ունէր 30.000 անդամ և հիմնած ունէր 210 խմբեր, 400-ից աւել գրադարաններ համայնքներում և 175 գրադարան զօրատներում։ Իսկ երբ կղերական նախարարութիւնը ընկաւ և կառավարութեան գլուխ անցաւ Ֆերրին, դաշնակցութիւնը քաղաքացիական իրաւունք ստացաւ և նորա օրինագիծը՝ պարտադիր և ձրի ուսում մտցնել, ընդունուեց և հաստատուեց պատգամաւորների պալատում։ 1889 թուին, դաշնակցութեան մէջ մտնող բոլոր ընկերութիւնների ներկայացուցիչները առաջին անգամ կոնգրէս կազմեցին։ Այդ ժողովում մշակուեց դաշնակցութեան կանոնադրութիւնը և գծուեց այն ճանապարհը, որով նա պիտի ընթանայ ապագայում։ Այդ ժողովում Մասէն ճառ խօսեց, որով յայտնում էր թէ դաշնակցութիւնը այսուհետև էլ պիտի ազատ լինի կուսակցական ոգուց. «մեր գործն է՝ ընտրողներ ստեղծել, ոչ թէ՝ ընտրութիւններ անել»,— ասում է նա։ «Եատ չարչարուեցանք մինչև որ ազատ ժողովուրդ դարձանք։ Ուրեմն աշխատենք պահել այդ ազատութիւնը, իսկ դա միայն այն ժամանակը կարելի է, երբ մեզանից ամեն մէկը այդ ազատութեան պահապան կը լինի։ Երբ այդպիսով դաշնակցութիւնը պետական հաստատութիւն ստացաւ, այնուհետև ամեն տարի կոնգրէսներ էին կազմւում, իսկ 1889 թուին դաշնակցութիւնը առաջին անգամ միջազգային կոնգրէս կազմեց «ժողովրդային կրթութեան մասնաւոր նախաձեռնողներից»։ Այդ կոնգրէսին մասնակցում էին բոլոր եւրոպական տէրութիւնները, մինչև անգամ Չինաստանը, Ճապոնը, Արգենտինեան հասարակապետութիւնը և ուրիշները։ Այստեղ վճռուեց ժողովրդային կրթութեան միջազգային դաշնակցութիւն կազմել։ Ֆրանսիական դաշնակցութիւնը, որ իւր գոյութեան 25 տարեայ ընթացքում 200-ից աւել խմբեր էր կազմել, այժմ աւելի ընդարձակում է իւր նպատակները, և, ինչպէս Մասէն

ասում է, «անցնում է միջազգային խաչակրութեան գլուխը ոգիտութեան դէմ արշաւելու»։

Տեսանք, թէ Ֆրանսիայի ժողովրդի կրթութեան գործում ինչ մեծ նշանակութիւն ունեցան մասնաւոր մարդկանց ջանքերը, որոնք իրանց սիրտն ու հոգին ամբողջապէս նուիրել էին ընտրած գործին։

Ֆրանսիական դաշնակցութեան պատմութիւնը ցոյց է տալիս, թէ ինչեր կարելի է անել եռանդով և միաբան գործելով։ Մեզ մնում է միայն ցանկանալ, որ այդ դաշնակցութեան օրինակը գէթ մասամբ նպաստէ մեզ մօտ ևս նոյնպիսի հասարակութիւններ կազմելուն։